

կ'ըսէ՝ թէ ինքն իսկ շատ անգամ «ի պահս» կ'անցնէր (անդ, ԺԱ, 27):

Արդ ականերեւ է՝ որ Եկեղեցին առաքելական դարէն իսկ սկսաւ պահեցողութիւնը, եւ Հայք եւս ընդունեցան զայն աւետարանի լուսոյն հետ:

2. — Պահոց տեսակները: — Ամէն պահոց կերակուրք հաւասար չէին. օրուան կարեւորութեան համեմատ սնունդն ալ աւելի կամ նուազ խիստ կը լինէր: Տաթեւացին պահքերը կը բաժնէ երեք տեսակի. պահք, որ կը կայանար մսէ հրաժարելու եւ պտղով ու բոյսերով շատանալու մէջ. սրբապահք, ուր կը զրկուէին տնկոց պարարիչ հիւթերէն եւս, ինչպէս ձէթ, գինի եւ այլն. եւ ծովապահք, որ կը լինէր պարզագոյն ուտելիքներէ անգամ, ինչպէս ցորենէ եւ ջրէ՝ հրաժարելով, եւ ինք զինքը «մաշելով սովով եւ ծարաւով» (Քրդ. ձմր. 148): Այս բաժանմունք մասամբ ծանօթ են աւելի կանուխ՝ Ալաւկայ որդւոյն կանոնաց մէջ եւս. հոն կը գտնենք սրբապահոռքիւնը (Ե, ԻԵ, ԿԵ), զոր Միս. Գոշ ալ կ'առնու եւ կը կրկնէ (Խր. Պտր.): Ալաւկայ որդին ունի նաեւ շարասրապահոռքիւն (անդ), որ է շաբաթ մը ծոմ պահել: Եւ ՅՀ. Եզնկացին կը յիշէ սրբապահ առնել կամ ծոմով պահել (Խրտ.